

**Վլադիմիր Մաղալյան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու*

**ՆՈՐ ԷՋԵՐ ԿՈՎԿԱՍԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
(XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)**

Արևելահայ մամուլի առաջնեկը հայ լրագրության պատմության մեջ վաղուց իր տեղը հաստատած «Արևելյան ժամուցմունք» շաբաթաթերթն է, որն Աստրախանում ժամանակին լույս տեսնող «Восточные известия» ռուսերեն թերթի թարգմանությունն էր: Հայերեն նյութերը տպագրվում էին թերթի միևնույն համարում, ռուսերեն բնագրերին զուգադիր, առանձին սյունակներով:

«Восточные известия»-ն հիմնադրվել էր 1813 թ. Աստրախանի գիմնազիայի գերմաներեն լեզվի ուսուցիչ Իոսիֆ Ֆոն Վայսբրոպֆենի կողմից: Նա հետագայում, հաշվի առնելով քաղաքի ազգաբնակչության կազմում հայերի մեծ թիվը և նրանց ծանրակշիռ ավանդը տեղի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, որոշում է իր շաբաթաթերթը թարգմանաբար հրատարակել նաև հայերեն, որը մեծապես կնպաստեր այդ լրագրի հեղինակության բարձրացմանն ու բաժանորդների թվի աճին: Իր նպատակն իրագործելու համար նա դիմում է կառավարությանը, ստանում թույլտվություն, ապա և, ձեռք բերելով հայկական տառատեսակներ, 1816 թ. հունվարից «Восточные известия»-ն լույս է ընծայում նաև հայերեն թարգմանությամբ, որով էլ սկիզբ է դրվում արևելահայ պարբերական մամուլին Ռուսաստանում: Այդ դժվարին գործում խմբագրին օգնել, ռուսերեն նյութերը թարգմանել և խմբագրական աշխատանքներին մասնակցել են հայազգի մտավորականներ Կղեմես Շահվերդյանը, Մկրտիչ Բերոյանցը և հայտնի նկարիչ Կոստանդին Թադևոսի Սերբերյակյանը (Սերբերյակով):

Այս թերթի գոյության փաստին առաջինը 1894 թ. Թիֆլիսում տեղեկացել է հայ լեզվաբան, պրոֆ. Լևոն Մսերյանը և այդ մասին հայտնել ժամանակի նշանավոր պատմաբան Ալ. Երիցյանին: Վերջինս դրանից մեկ տարի անց՝ 1895 թ., տեսնելով, որ Մսերյանն այդ լրագրի մասին հանդես չի գալիս մամուլում, ստիպված ինքն է «Արձագանք» թերթում տպագրում մի ծավալուն հոդված, որը պատրաստել էր «Восточные известия» ռուսերեն թերթի Թիֆլիսում պահվող հավաքածուի համարներում հայերեն և ռուսերեն լեզուներով տպագրված այն հայտարարությունների հիման վրա, որոնք առնչվում էին «Արևելյան ժամուցմունք»-ի հիմնադրման հետ<sup>1</sup>:

Սակայն քանի որ Ալ. Երիցյանը ծանոթ չէր «Восточные известия» թերթի 1816 թ. հայերեն նյութերով տպագրված համարներին և դրանք չէր տեսել Թիֆլիսում պահպանված չլինելու պատճառով, ուստի իր տարակուսանքն է հայտնում այդ թերթի հրատարակության ու գոյության փաստի առթիվ: Իսկ 1896 թ. «Արձագանք»-ի էջերում կրկին հանդես գալով նոր հոդվածով, այն կարծիքն է հայտնում, որ այդ թերթը

<sup>1</sup> Աղ. Երիցյան, Մի նոր գիտ հայոց լրագրութեան պատմութեան համար, «Արձագանք», Թիֆլիս, 1895, № 87:

1816 թ. չէր կարող հրատարակվել<sup>1</sup>: Այս եզրակացությանը նա հանգել է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Արևելյան ծանուցմունք»-ի խմբագիր Կոնստանտին Զահվերդյանը եղել է կաթոլիկ, իսկ կաթոլիկները, ըստ ռուսաց կայսեր հրովարտակի, 1816 թ. երկրից պետք է վտարված լինեին: Ուստի, հիշյալ թերթը նրա բացակայության պայմաններում չէր կարող լույս տեսնել:

Այդ օրերից 60, իսկ «Արևելյան ծանուցմունք»-ի լույսընծայումից 140 տարի անց, 1955 թ., ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներ Վարդան Ոսկանյանը և Վ. Գրիգորյանը Աստրախանի մարզային գրադարանում աշխատելու ընթացքում հայտնաբերում են հիշյալ թերթի 1816 թ. վերջին՝ 27-րդ համարը, որի հիման վրա նրանք հետազոտություններ են կատարում նաև Կազանի պետական համալսարանի գիտական գրադարանի ձեռագրերի ֆոնդերում և գտնում մի շարք հավաստի նյութեր, որոնք հաստատում են դրա հրատարակված լինելու փաստը: Այդ առթիվ նրանք համատեղ գրում են մի հոդված և դրանով հանդես գալիս մամուլում<sup>2</sup>:

Եվ, վերջապես, 1966 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Վարդան Խաչատրյանը Կազանի պետական համալսարանի գիտական գրադարանում պատահականորեն հայտնաբերում է «Արևելյան ծանուցմունք»-ի 1813-1816 թթ. լրիվ հավաքածուները և ուսումնասիրում է դրանք ու իր հետազոտությունների արդյունքները ներկայացնում գիտական մամուլում<sup>3</sup>:

Հետագայում ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հայ մամուլի նվիրյալ հետազոտող Մ. Գ. Մխիթարյանը «Արևելյան ծանուցմունք»-ի մասին գիտական գրականության մեջ, մամուլում ու արխիվներում եղած այդ բոլոր նյութերը և իր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները ի մի բերելով՝ ընդգրկում է մի հիմնարար մենագրության<sup>4</sup> մեջ, որով նա փորձում է ընդհանուր գծերով ներկայացնել արևելահայ մամուլի սկզբնավորման ընդհանուր պատկերը XIX դարի առաջին կեսում:

\*

\* \*

Արևելահայ մամուլի մյուս օրգանը, ըստ ժամանակագրության, ցարդ համարվում է Թիֆլիսում 1846 թ. հիմնադրված Կովկասի փոխարքայության «Кавказ» ռուսերեն պաշտոնաթերթի հայերեն կրկնօրինակը՝ «Կովկաս» վերտառությամբ: Սակայն պետք է նկատել, որ «Արևելյան ծանուցմունք»-ից մինչև «Կովկաս» շաբաթաթերթի հրատարակությունն ընկած է մի ժամանակահատված, որն ընդգրկում է երեք տասնամյակ: Իսկ այդ ընթացքում Թիֆլիսում լույս են տեսել մի քանի պարբերականներ, որոնք անմիջականորեն կապված են Անդրկովկասի հայկական կյանքի հետ և հող են նախապատրաստել հայերեն մամուլի հիմնադրման համար: Բացի այդ, նշված ժամանակահատվածում Թիֆլիսում հայոց լեզվով թերթ հրատարակելու մի քանի փորձեր էին կատարվել: Քանի որ Թիֆլիսի ազգաբնակչության գերակշռող մասն

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, 1896, № 5:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Ոսկանյան, Վ. Գրիգորյան, Ռուսահայոց առաջին պարբերաթերթ «Արևելյան ծանուցմունք», «Սովետական գրականություն» հանդես, Եր., 1957, № 3, էջ 169-173:

<sup>3</sup> Տե՛ս Բ. Ա. Хачатурян, Из истории армянской печати в России, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 1, էջ 99-106:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 14-26:

այդ ժամանակ հայեր էին, ուստի հայերեն պարբերականի անհրաժեշտությունն այստեղ վաղուց էր զգացվել: Ասվածը հիմնավորելու համար վկայակոչենք մի քանի փաստեր, որոնք անմիջականորեն վերաբերում են Վրաստանի մայրաքաղաքի ազգաբնակչությանը:

Թիֆլիսում հայերի վաղնջական ժամանակներից բնակություն հաստատելու մասին առաջին տեղեկությունները գտնում ենք հայկական և վրացական հնագույն ձեռագիր աղբյուրներում, իսկ ավելի ուշ դարերին վերաբերողները՝ Կովկաս այցելած ճանապարհորդների ու գիտնականների ուղեգրություններում: Օրինակ, հայտնի բուսաբան Տուրնեֆորդի վկայությամբ XVIII դարի սկզբին Թիֆլիսի շուրջ 20 հազար բնակիչներից 14.500-ը եղել են հայեր: Այս փաստը դրանից կես դար անց հաստատում է վրաց հայտնի պատմաբան, աշխարհագրագետ ու քարտեզագիր, արքայազն Վախուշտին (1696-1757) իր «Վրաստանի թագավորության նկարագրությունը» հիմնարար աշխատության մեջ:

Յետագայում Թիֆլիսի ազգաբնակչությունը մեծ թվով կորուստներ է ունեցել պարսից Աղա-Մահմադ խանի 1795 թ. Վրաստան կատարած արշավանքի ժամանակ, երբ նրա կեսից ավելին սրի է քաշվել ու դարձել հրդեհների ու ավերածությունների զոհ: Այդ էր եղել պատճառը, որ XVIII դարի վերջերին Թիֆլիսի ազգաբնակչության թիվը կիսով չափ կրճատվել էր:

Վրաստանի և Արևելյան Չայաստանի մի մասի Ռուսաստանի հետ միավորվելուց հետո (1801 թ.) Թիֆլիսը դառնում է Ռուսական կայսրության նորաստեղծ Վրացական նահանգի վարչական կենտրոնը և ռուսաց զորքի գլխավոր հրամանատարի նստավայրը: Իսկ 1845-ից սկսած, երբ կառավարչի տեղն զբաղեցնում է փոխարքան, այն դառնում է նաև Կովկասի փոխարքայության մայրաքաղաքը:

Ցարական Ռուսաստանի կազմում 1817 թ. Թիֆլիսն արդեն ուներ 15 հազար բնակիչ, որի 11.200-ը հայեր, 2.800-ը՝ վրացիներ և 1.000-ը այլազգիներ էին<sup>1</sup>: Յետագա ութ տասնամյակների ընթացքում այդ թիվն աճում է շուրջ 12 անգամ և դարավերջին կազմում 172,6 հազար մարդ: 1899 թ. անցկացված մարդահամարի տվյալներով Թիֆլիսի ազգաբնակչության մեծամասությունը՝ 63 հազարը կամ ընդհանուր թվաքանակի 36,4 տոկոսը կազմում էին հայերը, 44,9 հազարը կամ 26 տոկոսը վրացիներ էին, իսկ մնացած 64,7 հազարը կամ 37,6 տոկոսը՝ այլազգիներ (ռուսներ, թաթարներ, հրեաներ, ֆարսեր, օսեր և այլն)<sup>2</sup>:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մեկ դար շարունակ Թիֆլիսը հիմնականում բնակեցված է եղել հայերով: Այն իր աշխարհագրական հարմարավետ դիրքով, բնակլիմայական մեղմ պայմաններով և առևտրատնտեսական ու կուլտուր-մշակութային զարգացման արագ տեմպերով ու միաժամանակ Կովկասի վարչական կենտրոնը լինելու հանգամանքով դեպի իրեն էր ձգում այդ բազմազգ երկրամասի կարող ուժերին, հատկապես հայերին:

Եվ այդպես, Ռուսաստանի հովանու ներքո, Թիֆլիսն աստիճանաբար դառնում է Անդրկովկասի տնտեսական ու կուլտուրական առաջատար կենտրոնը: Ռուսաց տեղական կառավարչությունը նպաստում է երկրի արագընթաց վերելքին, կրթության ու գիտության զարգացմանը: Չայախիտ այդ քաղաքում գործում են բազմաթիվ

<sup>1</sup> Տե՛ս Ю. Д. Анчабадзе, Н. Г. Волков, Старый Тбилиси, город и горожане в XIX веке, Москва, изд. “Наука”, 1990, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 31:

վանքեր ու եկեղեցիներ, որոնց կից բացվում են դպրոցներ, ձևավորվում հասարակական-մշակութային կազմակերպություններ՝ իրենց աչքի ընկնող գործիչներով, աշխուժանում են գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը և այլն: Թիֆլիսում ռուսաց զինվորական կառավարչության կողմից 1804-ին<sup>1</sup> վերականգնվում է 1795 թ. Աղա-Մահմադ խանի կողմից ավերված տպարանը և այն համալրվում ռուսական, հայկական, վրացական և ֆարսի տառատեսակներով: Ցարական Ռուսաստանի օրենքներն ու որոշումները տպագրելու և Վրաստանի ազգաբնակչությանն իրենց մայրենի լեզուներով ծանոթացնելու նպատակով:

1816 թ. Վրաստանի զինվորական կորպուսի հրամանատար է նշանակվում գեներալ-լեյտենանտ Ա. Պ. Երմոլովը (1777-1861), որը փոխարինում է 1812-ից այդ նույն պաշտոնում եղած Ն. Ֆ. Ռտիշչևին (1754-1835): Նա իբրև Կովկասի գերագույն կառավարիչ, Ռուսաց կայսրից ստացել էր անսահմանափակ լիազորություններ՝ ղեկավարելու երկրամասի ռազմական ու քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի բոլոր բնագավառները: Նա իր պաշտոնավարության 11 տարիների ընթացքում Վրաստանում կատարում է մի շարք բարենորոգություններ, որոնցից մեկն էլ լինում է վրացական ազգային առաջին լրագրի «Սաքարթվելոս գազեթի»-ի («Վրաստանի թերթ») հիմնադրումը Թիֆլիսում<sup>2</sup>: Ա. Պ. Երմոլովի անմիջական նախաձեռնությամբ ու վրաց մտավորականության աջակցությամբ 1819 թ. մարտի 8-ին լույս է տեսնում այդ շաբաթաթերթի անդրանիկ համարը<sup>3</sup>, որը Կովկասի զինվորական առանձին կորպուսի գլխավոր շտաբի հրատարակությունն էր: Կարճ ժամանակ անց, այն վերանվանվում է «Քարթուլի գազեթի» («Վրացական թերթ»): Այդպիսով իրականություն է դառնում դեռևս 1799 թ. նշանավոր լուսավորիչ Իոանե Բագրատիոնի (1712-1830) կողմից արձարծված գաղափարը վրացական ազգային լրագիր ստեղծելու վերաբերյալ:

Յիշյալ թերթի հրատարակությունը իրականացնելու համար, ինչպես նկատել է վրացի գիտնական Ջ. Լ. Վատեյշվիլին, հիմք էր ծառայել դրանից երկու տարի առաջ՝ 1816 թ. Աստրախանում տպագրված «Восточные известия» թերթի «Արևելյան ծանուցմունք» հայերեն կրկնօրինակ-հավելվածը: «Քարթուլի գազեթի»-ն նույնպես պատրաստվում էր ռուսաց լեզվով և նոր միայն թարգմանվում վրացերեն: Կովկասի կյանքում իր նախատիպը չունեցած այդ թերթի լույսընծայմամբ տեղական ռուսական կառավարչությունը նպատակ ուներ երկրամասի կյանքում կատարվող ու կատարվելիք բարեփոխությունների և այլ հրատապ խնդիրների վերաբերյալ տեղի ազգաբնակչության հետ խոսել և նրան դիմել գրավոր խոսքով և այն էլ իր մայրենի լեզվով<sup>4</sup>: Սակայն այս թերթը բավարար քանակությամբ բաժանորդներ չունենալու հետևանքով 1821 թ. վերջերին փակվում է:

<sup>1</sup> Տե՛ս **Н. А. Бердзенишвили, В. Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликишвили, Ш. А. Месхия**, История Грузии, т. I, Тбилиси, 1962, էջ 423: Այս տպարանի հիմնադրման տարեթիվը այլ աղբյուրներում նշված է 1805-ը:

<sup>2</sup> Ճիշտ է, վրաց հայտնի պատմաբան Ջ. ճիճինաձեն գրել է այն մասին, որ Վրաստանում իբրև 1763-1787 թթ. լույս է տեսել «Քրծանքա դա ուժղեքա» («Չրամաններ և ծանուցումներ») անվամբ վրացերեն թերթ (տե՛ս **Ճիճինաձե Ջ.**, Վրացերեն թերթի հարյուրամյա պատմությունը, Թբիլիսի, 1916, էջ 62-64, վրացերեն), բայց այդ լրագրի գոյությունը հաստատող փաստական նյութեր ոչ մի տեղ չեն հայտնաբերվել, հավաստում են վրաց մամուլի պատմաբաններն ու մատենագետները:

<sup>3</sup> Տե՛ս **А. З. Абрамишвили**, Грузинская периодика (1819-1917 гг.), Тбилиси, изд. Тбилисского университета, 1968, էջ 9: Տե՛ս նաև «Первая грузинская газета», Тбилиси, изд. Тбилисского университета, 1969.

<sup>4</sup> Տե՛ս **Д. С. Ватейшвили**, Русская общественная мысль и печать на Кавказе, Москва, изд. “Мысль”, 1973, էջ 91:

«Քարթուլի գագեթի»-ն, հասարակական-քաղաքական կյանքից վերցված պաշտոնական հաղորդագրություններ, որոշումներ, հրահանգներ ու հրամաններ և լուրեր տպագրելուց բացի, անդրադառնում էր նաև Վրաստանում ու արտասահմանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, ինչպես և գիտության ու մշակույթի նորություններին: Նրա էջերում տպագրվել են նաև գեղարվեստական գործեր ու թարգմանություններ:

Հատուկ որոշմամբ նրանում արգելվում էր արծարծել ցարական կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող խնդիրներ: Չնայած այս ամենին, պետք է նկատել, որ «Քարթուլի գագեթի»-ն իր գոյության երեք տարիների ընթացքում որոշակի դեր է կատարում տեղի ազգաբնակչության լուսավորության ու գիտակցական մակարդակի բարձրացման գործում: Այդ թերթն ունեցել է նաև ավելի քան 100 հայ բաժանորդ: Նրան թղթակցել ու խմբագրական աշխատանքներին մասնակցել է հայազգի Գարսևան (Կարապետ) Ղորղանյանը<sup>1</sup>:

«Քարթուլի գագեթի»-ի փակվելուց հետո փորձեր են արվում թիֆլիսում ազգային լեզուներով նոր պարբերականներ հրատարակելու ուղղությամբ: Հայ իրականության մեջ Ներսես Աշտարակեցին ծրագրում է իր կողմից բացված դպրոցում հիմնադրել «Տարեգրութիւն հայոց գրագիտական» անվամբ մի հանդես, որի հրատարակությունը պետք է սկսվեր 1827 թ. վերջերից կամ հաջորդ տարվա սկզբներից: Սակայն վերահաս ռուս-պարսկական պատերազմը խանգարում է այդ ծրագրի իրագործմանը: Դրանից մեկ տարի անց՝ 1828 թ. այդ հանդեսի համար պատրաստված նյութերը տպագրվում են «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» վերտառությամբ, Ա և Բ պրակներով<sup>2</sup>:

Նույն շրջանում նման մի փորձ էլ կատարվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որը նույնպես ծագած ռուս-թուրքական պատերազմի հետևանքով չի իրականացվում: Ստեղծվելիք հանդեսի համար հավաքված նյութերը 1829 թ. տպագրվում են «Մուզայք Արարատեան» խորագրով մի առանձին ստվարածավալ ժողովածուով<sup>3</sup>:

Ռուս-պարսկական պատերազմն սկսվելուն պես, 1826 թ. ամռանը, զենքալա-աղյուտանտ Ի. Ֆ. Պասկևիչը ցարի կողմից ուղարկվում է Կովկաս իբրև Ա. Պ. Երմոլովի օգնական և միաժամանակ ռուսական զորքերի հրամանատար: Վերջինիս սադրանքներով Ա. Պ. Երմոլովը ազատվում է պաշտոնից և 1827 թ. մարտից նրան որպես Կովկասի կառավարիչ փոխարինում է Ի. Ֆ. Պասկևիչը (1782-1856):

Ռուս-պարսկական պատերազմում հաղթանակում է ռուսական բանակը և 1828 թ. փետրվարի 10-ին թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվում է Ռուսաստանին: Նույն շրջանում սկսվում է նաև ռուս-թուրքական պատերազմը: Եվ որպեսզի պատերազմական գործողությունների մասին լուրերը չաղավաղվեն ու դրանց մասին ընթերցողները հավաստի տեղեկություններ ստանան, Ի. Ն. Պասկևիչը ռուսաց թագավորից թույլտվություն է խնդրում թիֆլիսիում հրատարակելու ռուսերեն մի թերթ՝ վրացերեն, հայերեն և ֆարսերեն հավելվածներով:

Նրան այդ թույլտվությունը տրվում է այն պայմանով, որ ինքն անձամբ պատասխանատվություն կրի ռուսական տարբերակի համար, իսկ հավելվածները լինելու

<sup>1</sup> Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 69:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 27-55:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 56-66:

Էին զուտ դրա կրկնօրինակը: Այսպիսով, 1828 թ. հունիսի 4-ից սկսում է լույս տեսնել Թիֆլիսի ռուսական առաջին պաշտոնաթերթը՝ «Тифлисские ведомости» («Թիֆլիսյան տեղեկատու») վերտառությամբ, որը հրատարակվել է մինչև 1833 թ. կեսերը (խմբագիրները եղել են. նախ՝ ռուս ճանաչված պատմաբան ու ժուռնալիստ Պ. Սանկովսկին, իսկ նրա մահից հետո՝ 1832 թ. կեսերից՝ հնուտ ժուռնալիստ Գ. Գորդեևը): Այս թերթը շատ կարճ ժամանակամիջոցում ընթերցող և կառավարող շրջաններում ձեռք է բերում լուրջ հեղինակություն ու համարում շնորհիվ իր լրագրական բարձր կուլտուրայի ու տարաբնույթ խնդիրների լուսաբանման ճշմարտացիության: Այստեղ մենք չենք ուզում անդրադառնալ նրա արժարժած բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներին, հայկական թեմաներով ու հայ հեղինակների կողմից գրված և նրա էջերում տպագրված նյութերին: Այդ ամենը մանրակրկիտ կերպով իր վերոհիշյալ աշխատության մեջ վերհանել է ճանաչված գիտնական Մ. Գ. Մխիթարյանը<sup>1</sup>: Միայն նշենք, որ «Тифлиссские ведомости» թերթը, որ պետք է ունենար հայերեն հավելված, ինչպես նշված էր նրա կանոնադրության մեջ, այդպես էլ չի ունենում: Ի. Ֆ. Պասկևիչը, հակառակ իր նախնական որոշման, հետագայում հրաժարվում է հայկական կրկնօրինակը հրատարակելու մտքից՝ պատճառաբանելով, «թե այդ հավելվածը հայերեն տպագրելու անհրաժեշտություն չկա, քանի որ ամեն մի հայ այդ լեզուներից մեկնումեկին անպայման գերազանց տիրապետում է»<sup>2</sup>: Այսպես, նա հայերեն թերթի հրատարակությունը Թիֆլիսում օրակարգից հանել է տալիս:

Այս փաստը նշելով՝ վրացի գիտնական Ջ. Լ. Վատեյշվիլին գրում է. «Այն երկյուղը, թե պետական գանձարանը կժանրաբեռնվի ավելորդ ծախսերով, վարչության համար բավարար հիմք էր, որպեսզի հայկական հավելվածը լույս չտեսներ, թեկուզ դա հակառակ լիներ հպատակ մի ամբողջ ազգի շահերին»<sup>3</sup>:

Այսպիսով, տպագրվում են միայն վրացերեն և ֆարսերեն հավելվածները: Վրացերեն հավելվածը, որ կրել է «Թփիլիսիս ուժղեբանի»\* վերնագիրը, լույս է տեսել 1828 թ. հունիսի 4-ից: Այն խմբագրել է վրաց անվանի մանկավարժ, գրող ու հրապարակախոս Սոլոմոն Դոդաշվիլին, իսկ ֆարսի լեզվով տպագրվող տարբերակը, որից ոչ մի օրինակ չի պահպանվել, հրատարակվել է 1829 թ. սկզբից: Ենթադրվում է, որ այն խմբագրել է թաթար Աբաս կուլի-աղա Բաքիխանովը, որն այդ ժամանակ պետական ծառայության մեջ է եղել Թիֆլիսում<sup>4</sup>:

Ֆարսերեն և վրացերեն հավելվածների տպագրվելու մասին իմանում ենք թերթի ռուսերեն և վրացերեն հրատարակությունների ենթավերնագրային տվյալներից, որոնց 1829 թ. յուրաքանչյուր համարի առաջին էջերի վերին ձախ անկյուններում, զլխագրերի տակ կարդում ենք. ««Тифлиссские ведомости»-ն լույս է տեսնում ռուսերեն՝ հինգշաբթի, վրացերեն՝ երկուշաբթի, իսկ ֆարսերեն՝ չորեքշաբթի օրերին (ռուսերենի՝ №№ 1-52-ում, իսկ վրացերենի՝ №№ 1-12-ում)»<sup>5</sup>: Վրացերեն տարբերակի հիշյալ 12 համարներում տպագրվել են հիմնականում պաշտոնական նյութեր,

<sup>1</sup> Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 67-93:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>3</sup> Տե՛ս Դ. Ս. Ватейшвили, նշվ. աշխ., էջ 148:

\* Այս թերթի 1828 թ. առաջին չորս համարները տպագրվել են «Թփիլիսիս վեդոմոստեբի» վերտառությամբ, որից հետո նոր միայն վերնագիրն ամբողջությամբ թարգմանվել է վրացերեն՝ «Թփիլիսիս ուժղեբանի»:

<sup>4</sup> Տե՛ս Դ. Ս. Ватейшвили, նշվ. աշխ., էջ 150:

\*\* Իրականում «Тифлиссские ведомости»-ի ռուսերեն տարբերակը լույս է տեսել ուրբաթ օրերին:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Զ. Абрамишвили, նշվ. աշխ., էջ 34:

իսկ ոչ պաշտոնական՝ ինքնուրույն նյութերից աչքի են ընկնում Շոթա Ռուսթավելու մասին տպագրված ընդարձակ մի հոդված (1829 թ., № 3), որի հեղինակն է Լուարսաբ Երկայնաբազուկ-Արղոթյանը, իսկ մյուսը՝ Ա. Ս. Պուշկինի «Արթնացում» ոտանավորն է (1830 թ., № 2), որը ցարդ ռուս մեծ բանաստեղծի վրացերեն թարգմանությամբ հրատարակված առաջին գործն է համարվում:

1830 թ. հոկտեմբերին ռուսաց կայսեր կողմից վերանայվում է մամուլի մասին նախկինում ընդունված «Կանոնադրությունը», որի մեջ կատարվում են որոշակի փոփոխություններ, սահմանվում է Ռուսաստանում թերթերի հրատարակության նոր կարգ: Ըստ այդ կարգի երկրի վեց նահանգներում, այդ թվում և Կովկասում, պետք է տպագրվեին նահանգական պաշտոնական «Տեղեկագրեր»:

Այդ ժամանակ Ի. Ֆ. Պասկևիչի փոխարեն Առանձին Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար էր նշանակվել բարոն Վ. Գ. Ռոզենը (1781-1841), որը 1832-ից նաև այս երկրամասի քաղաքացիական կառավարչապետն էր դարձել, իսկ 1837-ից ընտրվել սենատոր: Նա մամուլի մասին ընդունված նոր կարգին համապատասխան Թիֆլիսում աշխատանքներ էր տանում նոր թերթի հրատարակության համար, երբ Պ. Սանկովսկին փոխում է իր խմբագրած «Тифлиссские ведомости» թերթի ուղղվածությունը և այն, վերանվանելով «Литературная часть «Тифлиссских ведомостей»», դարձնում է գրական պարբերական: Ըստ այդմ վերափոխվում է նաև նրա վրացերեն հավելվածը՝ դառնալով «Սալիտերատուրոնի նածիլնի «Թփիլիսիս ուծղեբատանի»» (««Թփիլիսի տեղեկատու»-ի գրական հավելված») վերտառությամբ ազգային առաջին գրական թերթը Վրաստանում: Այս պարբերականները ընդլայնում են նաև իրենց գործունեության շրջանակները, դառնում ավելի բովանդակալից ու հետաքրքիր: Վրացական տարբերակը լույս էր տեսնում երկու շաբաթը մեկ անգամ: Նրա էջերում քննարկվում էին կրթական ու մշակութային խնդիրներ, տպագրվում պատմական թեմաներով ակնարկներ, գեղարվեստական ու թարգմանական արձակ ու չափածո գործեր և այլն: Առաջին անգամ վրացերեն թարգմանությամբ այստեղ են տպագրվել Ա. Ս. Պուշկինի «Իսպանական ռոմանս» և «Գարնանային խրախճանք» բանաստեղծությունները: Լույս է տեսել այս թերթի ընդամենը հինգ համար, յուրաքանչյուրը՝ 24 էջ ծավալով, ընդհանուր թվակալմամբ՝ 120 էջ:

Սակայն Պ. Սանկովսկու մահից հետո նրան իբրև խմբագիր փոխարինած Գ. Գորդենը մեկ տարի շարունակելով վերակառուցված պարբերականի հրատարակությունը՝ 1833 թ. կեսերից առաջացած ֆինանսական դժվարությունների պատճառով ստիպված է լինում դադարեցնել նրա հրատարակությունը: Նույնը կատարվում է նաև վրացերեն հավելվածի հետ:

«Тифлиссские ведомости» թերթի և նրա հավելվածների փակվելուց հետո Կովկասում մինչև 1838 թ. ոչ մի պարբերական չի հրատարակվում, նախատեսված «Кавказских областных ведомостей» («Կովկասյան նահանգական տեղեկագիր») և «Սաքարթվելոս փուտկարի» («Վրաստանի մեղու») պարբերականների հիմնադրման փորձերն անցնում են ապարդյուն: 1838-1844 թթ. Պլատոն Իոսելիանու կողմից Թիֆլիսում հրատարակվում է միայն ամենամյա «Վրացական օրացույց»:

1837 թ. սենատոր ընտրված Վ. Գ. Ռոզենին, իբրև Կովկասյան Առանձին կորպուսի հրամանատար և Կովկասի քաղաքացիական վարչության կառավարիչ, փոխարինում է ռազմական և պետական նշանավոր գործիչ Ե. Ա. Գոլովինը (1782-1858), որն այդ պաշտոնը վարել է մինչև 1842 թ.: Նույն ժամանակաընթացքում աշխատանքներ

են տարվում նոր «Закавказский вестник» («Անդրկովկասյան լրատու») պարբերականի հրատարակության համար: Այդ առթիվ մշակվում են ընդարձակ կանոններ: Կառավարական նոր օրգանը պետք է հրատարակվեր չորս լեզվով՝ ռուսերեն, վրացերեն, հայերեն և ֆարսերեն: Այդ կանոնակարգը հաստատվել էր դեռևս 1836 թ., սակայն թերթի ռուսերեն տարբերակը սկսել է լույս տեսնել 1838 թ. հունվարի 15-ից<sup>1</sup>, իսկ վրացերեն և ֆարսերեն հավելվածները տպագրվել են 1845 թ. հունվարի 4-ից միայն: Վրացերեն տարբերակը լույս է տեսել շաբաթը մեկ անգամ, ուրբաթ օրերին: Պահպանվել է այդ թերթի միայն երկու համար՝ 1845 թ. հունվարի 4-ի № 1-ը և մարտի 11-ի № 11-ը: Ինչ վերաբերում է «Закавказский вестник»-ի հայերեն հավելվածին, ապա մինչև այժմ դրանից ոչ մի օրինակ չի հայտնաբերվել: Սակայն այդ առթիվ վրաց մամուլի հայտնի հետազոտող ու ճանաչված մատենագետ Ա. Զ. Աբրամիշվիլի վերն արդեն հիշատակված իր մատենագիտության մեջ նշում է. «Բայց և այնպես պետք է ենթադրել, որ «Закавказский вестник»-ը 1845 թ. հունվարի 4-ից լույս է տեսել նաև հայերեն: Դա ապացուցվում է այն բանով, որ Պետերբուրգի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում պահպանվող այդ թերթի 1838 թվականի հավաքածուներում գտնվում են առանձին հատուկ թերթոցներ՝ տպագրված ռուսերեն, վրացերեն, ֆարսերեն և **հայերեն** լեզուներով («հայերեն» բառի ընդգծումը հեղինակինն է - Վ. Մ.)»<sup>2</sup>:

Այս հավաստի փաստից ելնելով՝ կարող ենք ասել, որ Թիֆլիսում հայոց լեզվով թերթ սկսել է հրատարակվել 1845 թ. հունվարի 4-ից: Այն եղել է «Закавказский вестник»-ի «Անդրկովկասյան լրատու» տարբերակը:

«Закавказский вестник» ռուսալեզու թերթը մինչև 1844 թ. լույս է տեսել իբրև Կովկասի ռուսաց կառավարչության պաշտոնական օրգան և լուսաբանել է միայն տեղական իշխանությունների գործունեությունը, տպագրել նրանց որոշումներն ու հրահանգները, ինչպես նաև զանազան լուրեր ու հայտարարություններ: Անդրկովկասի փոխարքայության ստեղծումից հետո դարձել է ինքնուրույն լրագիր: Իսկ 1845-1847 թթ. առանձին հրատարակությամբ, շաբաթական երկու անգամ, Պ. Իոսելիանու խմբագրությամբ լույս է ընծայել իր պաշտոնական հավելվածը: «Закавказский вестник»-ը 1856-ից միացվել է փոխարքայության «Кавказ» շաբաթաթերթին և լույս է տեսել իբրև նրա պաշտոնական հավելված՝ իր գոյությունը պահպանելով մինչև 1864 թ., որից հետո փակվել է<sup>3</sup>:

«Закавказский вестник» թերթին զուգահեռ տպագրվող հավելվածները՝ վրացերեն, հայերեն և ֆարսերեն, լույս են տեսել միայն 1845-ին: Պետերբուրգի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում պահպանվող վրացերեն և ֆարսերեն տարբերակների հատուկ ենտ օրինակների ուսումնասիրության հիման վրա Ա. Զ. Աբրամիշվիլին հանգել է այն եզրակացության, որ «Закавказский вестник» թերթի ռուսերեն հրատարակությանը զուգահեռ 1845 թ. հունվարի 4-ից Թիֆլիսում սկսել են լույս տեսնել նրա վրացերեն, ֆարսերեն (ադրբեջաներեն) և հայերեն տարբերակները: Վրացերեն և ֆարսերեն հրատարակությունների խմբագիրը եղել է Պլատոն Իոսելիանին, իսկ թարգմանիչները՝ իշխան Զ. Փալանդովը և Բա-

<sup>1</sup> Մի շարք հրատարակություններում այս թերթի ռուսերեն տարբերակի լույսընծայման սկիզբ է համարվում 1836 թ., որը ճիշտ չէ:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Զ. Աբրամիշվիլի, նշվ. աշխ., էջ 8-9:

<sup>3</sup> Տե՛ս «Русская периодическая печать (1702-1894 гг.)», М., 1959, էջ 269-270:

բաջան Լազարևը: Հայոց լեզվով հրատարակված «Закавказский вестник»-ը առայժմ չի հայտնաբերվել»<sup>1</sup>: Պարզ է, քանի դեռ հայերեն տարբերակը մնում է անհայտության մեջ, ուստի նրա խմբագիրն ու թարգմանիչները նույնպես մնում են անհայտ:

Ա. Ջ. Աբրամիշվիլու վկայակոչած այս փաստերը, որ հետագայում հաստատել է նաև Ջ. Լ. Վատեյշվիլին վերը նշված իր աշխատության մեջ<sup>2</sup>, հայ մամուլի հետազոտողներին մնացել են անհայտ: Մ. Հ. Մխիթարյանը ևս, որ իր աշխատության մեջ հիմնավոր կերպով վերլուծել է «Закавказский вестник» թերթը, այս փաստերին չի անդրադարձել: Նա վերը նշված երեք հավելվածներից վկայակոչել է միայն երկուսը՝ գրելով. «1845 թվականից հրատարակվել են «Закавказский вестник»-ի վրացերեն և ֆարսի հավելվածները»<sup>3</sup>: Ըստ երևույթին նա ծանոթ չի եղել Ա. Ջ. Աբրամիշվիլու մատենագիտությանը, որի մեջ արձանագրված է այս ամենը: Դա հաստատվում է նաև այն բանով, որ Մ. Մխիթարյանն իր հիշյալ աշխատության մեջ ոչ մի տեղ չի հիշատակում Ա. Ջ. Աբրամիշվիլու այդ մատենագիտությունը, իսկ Ջ. Լ. Վատեյշվիլու վերոհիշյալ աշխատությունը վկայակոչված է մի քանի անգամ:

Այդ ժամանակ էլ՝ 1844 թ., ստեղծվում է Կովկասի փոխարքայությունը և առաջինը Կովկասում փոխարքա է նշանակվում Մ. Ս. Վորոնցովը (1782-1856), որը պաշտոնավարել է տասը տարի՝ մինչև 1854 թվականը: Նրա նախաձեռնությամբ «Закавказский вестник»-ին զուգահեռ 1846 թ. Թիֆլիսում հիմնադրվում է փոխարքայության օրգան «Кавказ» շաբաթաթերթը: Նորաստեղծ պաշտոնաթերթի խմբագիր է հաստատվում փոխարքայության դիվանատան պատասխանատու աշխատող Իոսիֆ Կոստանտինովը: Մ. Ս. Վորոնցովը որոշում է «Кавказ»-ին զուգահեռ հրատարակել նաև մի հայերեն թերթ՝ հուսալով, որ այն կարող է ունենալ բավարար քանակությամբ բաժանորդներ: Այդ կապակցությամբ նա Ի. Կոստանտինովին հանձնարարում է ստեղծել հայկական տարբերակի խմբագրություն: Վերջինս, խմբագրական աշխատանքներում իրեն օգնական է հրավիրում հայ ճանաչված մանկավարժ ու գրող Հակոբ Արզանյանին, որն իր հերթին, առաջարկում է գործի մեջ ներգրավել նաև Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, հայտնի դրամատուրգ Հակոբ Կարենյանին: Եվ քանի որ հայերեն թերթը գրեթե ամբողջությամբ լինելու էր ռուսերեն «Кавказ» թերթի թարգմանված տարբերակը և հայ խմբագիրները գրաքննչական ձևականություններին չպիտի առնչվեին, ուստի գործն ավելի հեշտանում էր: Եվ այդպես, նշված երկու հայ գործընկերների փաստական խմբագրությամբ պատրաստվում է «Կովկաս» հայերեն թերթի անդրանիկ համարը, որը լույս է տեսնում 1846 թ. հունվարի 12-ին: Սակայն, հակառակ սպասվածին, գրաքննության կողմից արգելվում է նրա տարածումը: Ուստի փոխարքա Մ. Ս. Վորոնցովը հայերեն տարբերակի համար ժամանակավոր գրաքննիչ է նշանակում Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ քահանա Օրբելին: Վերջինս, ծանոթանալով տպագրված համարին, հունվարի 14-ին թույլատրում է նրա տարածումը բաժանորդների շրջանում: Հետագայում Հովսեփ քահանա Օրբելին ի պաշտոնե նշանակվում է «Кавказ» հայերեն տարբերակի գրաքննիչ: Իսկ խմբագրական աշխատանքներում ներգրավվում է նաև Գաբրիել քահանա Պատկանյանը:

Այս թերթը, որ լուսաբանել է երկրամասի բազմազգ ժողովուրդների առօրյան, նրանց կյանքում կատարվող դրական տեղաշարժերը Ռուսաստանի հետ միավորվե-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Յ. Աբրամիշվիլի, նշվ. աշխ., էջ 34-35:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Ս. Վատեյշվիլի, նշվ. աշխ., էջ 83:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Հ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 76:

լուց հետո, ցարդ համարվել է կովկասահայ մամուլի առաջնեկը և «Արևելյան ծանուցմունք»-ից հետո երկրորդ թերթը՝ արևելահայ մամուլի պատմության մեջ: Սակայն, ինչպես տեսանք, «Կովկաս»-ի հիմնադրումից մեկ տարի առաջ՝ 1845 թ. հունվարից Թիֆլիսում հրատարակվել էր «Закавказский вестник» ռուսերեն թերթի հայերեն տարբերակը: Արդ ճիշտ կլիներ, որ «Արևելյան ծանուցմունք»-ից հետո արևելահայ մամուլի պատմության մեջ, ըստ ժամանակագրության, երկրորդ տեղն զբաղեցնեն «Անդրկովկասյան լրատու»-ն, որից հետո նոր միայն «Կովկաս»-ը: Ճիշտ է, «Անդրկովկասյան լրատու»-ից առաջ մի օրինակ չի հայտնաբերվել, բայց և այնպես նրա լինելիության փաստն, ինչպես տեսանք, անժխտելի է:

Հարց է ծագում, եթե ադրբեջանցիներն իրենց մամուլի սկիզբը Կովկասում համարում են «Тифлисские ведомости» թերթի 1829 թ. ֆարսի լեզվով լույս տեսած հավելվածը<sup>1</sup>, որից նույնպես ոչ մի օրինակ չի պահպանվել, ապա ինչո՞ւ «Закавказский вестник»-ի հայերեն տարբերակը, որն իրոք հրատարակվել է, մենք չենք կարող կովկասահայ մամուլի սկիզբը համարել: Մեզ թվում է, որ ժամանակն է ուղղելու այս անճշտությունը և կովկասահայ մամուլի պատմությունն սկսել «Անդրկովկասի լրատու»-ով:

\*  
\* \*

Ամփոփելով կովկասահայ մամուլի անցած ուղու արդյունքները XIX դարի առաջին կեսին՝ կարող ենք ասել, որ այդ շրջանը ոչ միայն հայ, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների մամուլի ու գրատպության սկզբնավորման համար եղել է խանձարուրային-փորձնական մի ժամանակահատված, երբ ռուսաց տեղական զինվորական կառավարչության օգնությամբ առաջին քայլերն էին կատարվում տարբեր լեզուներով թերթեր ստեղծելու ուղղությամբ, որը մասամբ պսակվել է հաջողությամբ: Այդ տարիներին, թեկուզ և մեծ ընդհատումներով հրատարակված հատուկենտ պարբերականներն ամուր հող են նախապատրաստել երկրամասում ազգային լեզուներով ինքնուրույն մամուլ ստեղծելու համար, որը բուռն թափով սկսել է զարգանալ, հատկապես, նույն դարի երկրորդ կեսին: Այդ հարուստ մամուլի առաջին մունետիկներն են դարձել ռուսալեզու «Кавказ»-ը (1846-1917 թթ.), հայերեն «Արարատ»-ը (1850-1851 թթ.), «Կռունկ Հայոց աշխարհի»-ն (1860-1863 թթ.), «Հայկական աշխարհ»-ը (1864-1871 թթ.), «Մշակ»-ը (1872-1921 թթ.), «Փորձ»-ը (1876-1881 թթ.), «Արձագանք»-ը (1882-1898 թթ.), «Աղբյուր»-ը (1883-1918 թթ.), վրացերեն «Ցիսկարի»-ն («Արշալույս», 1852-1875 թթ.), «Սաքարթվելոս մոամբե»-ն («Վրաստանի լուրեր», 1863 թ.), «Մնաթրի»-ն («Լուսատու», 1869-1872 թթ.), «Իվերիա»-ն (1877-1906 թթ.) և բազմաթիվ այլ պարբերականներ:

---

<sup>1</sup> Ի դեպ, «Тифлиссские ведомости» թերթի ֆարսերեն հրատարակված տարբերակի մասին ժամանակին առանձին հոդվածներ են գրել **Ի. Ենիկուրպովը**՝ «Первая тюркская газета на Кавказе» (տե՛ս «Культура и письменность Востока», Բաքու, 1928 թ., էջ 140-146) և **Ա. Ջ. Աբրամիշվիլին**՝ «Из истории Азербайджанской периодической печати» (տե՛ս «Ученые записки Азербайджанского государственного университета им. С. М. Кирова» Բաքու, 1956 թ., № 10, էջ 69-79), որոնք թուրքական (ինձմա՝ ադրբեջանական) մամուլի սկզբնավորումը Կովկասում կապում են դեռևս չհայտնաբերված այս պարբերականի հետ:

*Владимир Магальян, Новые страницы из истории армянской печати Кавказа первой половины XIX столетия* – В статье анализируется становление и развитие многоязычной печати Закавказья после его соединения с Россией (1801 г.). Первым здесь была основана «Картули газети» («Грузинская газета», 1819-1821 гг.). Потом были основаны правительственные официальные еженедельники «Тифлиские ведомости» (1828-1833 гг.), «Закавказский вестник» (1838-1864 гг.) и «Кавказ» (1846-1917 гг.), которые имели свои одноименные приложения на грузинском, армянском и персидском языках.

Исходя из этих данных и основных выводов некоторых исследователей, автор показывает, что первая армянская газета в Тбилиси была не приложение «Ковкас» к русскоязычному «Кавказу», выходившего в 1846 г., как было принято доньше, а приложение к «Закавказскому вестнику» – «Андрковкасян лрабер», выходившего с 4-го января 1845 года. Это свидетельствуют также видные грузинские ученые А. З. Абрамишвили и Д. Л. Ватейшвили. Обобщая все это, автор предлагает сделать хронологические изменения в летописи армянской периодической печати в Грузии.

**Vladimir Maghalyan, New pages of the Caucasian Armenian press history,**- The article analyses the origin and further development of the multilingual press in Caucasus in the beginning of the 19<sup>th</sup> century. It turned out that the first Armenian newspaper established in Tiflis was not «Կովկաս», the appendix of the «Кавказ» (1846-1847) but the «Transcaucasian reporter» printed on January 4, 1845, no issue of which has been found yet. The fact of its existence is grounded by distinguished Georgian scientists A. Z. Abramishvili and J. L. Vateyshvili. The author of the article suggests to introduce clarity into the chronological annals of the Armenian press.

